"Վավերացնում եմ"
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
6 մայիսի 2004թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ապրիլի 2004 թվականի N 586-Ն.

660 "ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ "ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում գնահատման միասնական համակարգ ստեղծելու նպատակով և "Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին ու 13-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.
1. Ստեղծել "Գնահատման և թեստավորման կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել "Գնահատման և թեստավորման կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սահմանել, որ՝
ա) "Գնահատման և թեստավորման կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան կրթական հաստատությունների սովորողների և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման իրականացումն է.
բ) "Գնահատման և թեստավորման կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության նպատակներն են՝
- գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման չափանիշների և դրանց իրականացման մեխանիզմների ու գործիքակազմի մշակման ապահովումը,
- սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ընթացիկ գնահատման նպատակով նյութերի և առաջադրանքների մշակման ու տրամադրման ապահովումը,
- տարրական, միջին և ավագ դպրոցի ավարտական քննական նյութերի և առաջադրանքների մշակման ու տրամադրման ապահովումը,
- սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգման նպատակով հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների և բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվողների թեստավորումն ու քննությունների գործընթացի կազմակերպումը,
- ուսումնական գործընթացում գնահատման նոր ձևերի արդյունավետ օգտագործման նպատակով կրթության համակարգի մանկավարժներին մեթոդական օժանդակության կազմակերպումը,
- սովորողների գիտելիքների կարողությունների ու հմտությունների գնահատման ազգային և միջազգային ստուգատեսների անցկացումը,
- սովորողների գիտելիքների ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփումը, վերլուծությունների իրականացումն ու դրանց հրապարակումը,
- կրթության համակարգի գնահատման չափանիշների մշակման ապահովումը,
- գնահատման մեթոդների կատարելագործման նպատակով փորձարարական ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ուղղակի կապի պահպանումը և քննությունների արդյունքների տրամադրումը: